«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

1 Հուլիսի 2022, N 13 - 7

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, ժամկետից շուտ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանողներ Ղազարոս Արմանի Միրզոյանի և Վահե Արմենի Թորոսյանի ուսանողական իրավունքները վերականգնելու մասին

Լսելով և քննարկելով՝

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2019 թվականի սեպտեմբերի 23-ի N ՈՒՄ /133/ 4-Ա հրամանով 2019-2020 ուսումնական տարում համալսարանի կառավարման ֆակուլտետի «Կառավարում (ըստ ոլորտի)» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունված (վճարովի հիմունքներով), բանակ զորակոչվելու կապակցությամբ ռեկտորի 2020 թվականի սեպտեմբերի 3-ի N ՈՒՄ /68/ 10-Ա հրամանով 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակից ուսումնառությունը դադարեցրած, 2021 թվականի դեկտեմբերի 20-ին զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ (01.04.2022) դիմած ուսանող Ղազարոս Արմանի Միրզոյանի (արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից) ուսանողական իրավունքները 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում վերականգնելու մասին հարցը:
2. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2020 թվականի սեպտեմբերի 22-ի N ՈՒՄ /78/ 45-Ա հրամանով 2020-2021 ուսումնական տարում համալսարանի կառավարման ֆակուլտետի «Զբոսաշրջություն» մասնագիտության բակալավրիատի առկա

ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունված (վճարովի հիմունքներով), բանակ զորակոչվելու կապակցությամբ ռեկտորի 2021 թվականի օգոստոսի 20-ի N ՈՒՄ /99/ 2-Ա հրամանով 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակից ուսումնառությունը դադարեցրած, 2021 թվականի դեկտեմբերի 10-ին զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ (26.04.2022) դիմած ուսանող Վահե Արմենի Թորոսյանի ուսանողական իրավունքները 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում վերականգնելու մասին հարցը:

Հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2022 թվականի հունվարի 26-ի N 05/11.2/548-2022 գրությամբ առաջարկվել է ազգային բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցած և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման հարցը քննարկել համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ հաշվի առնելով պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակը (առողջական, հոգեբանական խնդիրներ, զինվորական կոմիսարիատներից զինվորական գրքույկների տրամադրման ուշացումներ և այլն), ինչպես նաև այն հանգամանքը, որ Ղազարոս Արմանի Միրզոյանը (արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից) և Վահե Արմենի Թորոսյանը սահմանված ժամկետում իրենց ուսանողական իրավունքները վերականգնելու համար չեն դիմել համալսարան, քանի որ ունեցել են հոգեբանական խնդիրներ՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է**.

1. **Ղազարոս Արմանի Միրզոյանի** ուսանողական իրավունքները **վերականգնել** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի **«Կառավարում (ըստ ոլորտի)»** մասնագիտության **բակալավրիատի առկա** ուսուցման համակարգի **1-ին** կուրսում **2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից**:
   Հաշվի առնել, որ Ղազարոս Արմանի Միրզոյանը մինչև բանակ զորակոչվելը՝ 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանում հանձնել է կրթական

ծրագրով նախատեսված բոլոր դասընթացների ստուգարքներն ու քննությունները, բացառությամբ «Կազմակերպման տեսություն (4 կրեդիտ)» դասընթացի քննության:

2. **Վահե Արմենի Թորոսյանի** ուսանողական իրավունքները **վերականգնել** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի **«Կառավարում (ըստ ոլորտի)»** մասնագիտության **բակալավրիատի առկա** ուսուցման համակարգի **1-ին** կուրսում **2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից**՝ հաշվի առնելով, որ 2021-2022 ուսումնական տարում «Զբոսաշրջություն» մասնագիտությամբ 1-ին կուրսի բացակայության պատճառով նրա մոտ առաջանում է 3 առարկայական տարբերություն (1 ստուգարք՝ 2 կրեդիտ և 2 քննություն՝ 7 կրեդիտ): Հաշվի առնել, որ Վահե Արմենի Թորոսյանը մինչև բանակ զորակոչվելը 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանում կրթական ծրագրով նախատեսված բոլոր դասընթացներից չի հանձնել «Հայոց պատմություն-2» (2 կրեդիտ) դասընթացի ստուգարքը: Մասնագիտությունը փոխելու հետ կապված նա պետք է հանձնի առաջացած առարկայական տարբերությունները հետևյալ դասընթացներից՝ «Ռուսաց լեզու-1» (ստուգարք՝ 2 կրեդիտ), «Բարձրագույն մաթեմատիկա-1» (քննություն՝ 3 կրեդիտ), «Հռետորական արվեստ» (քննություն՝ 4 կրեդիտ), ինչպես նաև քննաշրջանում կրթական ծրագրով նախատեսված ստուգարքներն ու քննությունները հետևյալ դասընթացներից՝ «Ռուսաց լեզու-2» (2 կրեդիտ), «Բարձրագույն մաթեմատիկա-2» (3 կրեդիտ), «Կառավարման համակարգերի ընդհանուր տեսություն» (5 կրեդիտ), «Կազմակերպման տեսություն» (4 կրեդիտ), «Գործավարություն և օֆիսի կազմակերպում» (4 կրեդիտ):

3. Հանձնարարել կառավարման ֆակուլտետի դեկանին՝ կազմել և հաստատման ներկայացնել **Ղազարոս Արմանի Միրզոյանի** և **Վահե Արմենի Թորոսյանի** 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից 1-ին կուրսում վերականգնվելու համար առաջացած առարկայական ստուգարքների և քննությունների հանձնման ժամանակացույցը:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դիանա Գալոյան**

2022 թ. հուլիսի 1
Երևան